

ՏԱՅԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԻՆԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 19 ՄԱՐՏ 1911

ԹԻԻ 10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մենք ՊԱՀՈՅ ԱՌԹԻԻ ԿՐՕՆ. ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ.—(Ի.)Դրամի կեանքը բաբգէն եղիսկոյնս
երեսաստորի ՄԸ ՎՐԴՈՎՈՒՄՆԵՐԸ.— Նամակներ առ Հրայր.—

Բ. Ինչո՞ւ պէտք է Հաւատանք Ս. Գրքին.

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

Ս. Գրքէն Յոլքեր

ՊՍԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ.—Բննադատութիւն Տ. Մուշեղ եպիս.ի համանուն գործին(Ի.) ՀՄ. ՔԶԹ ԷՔՍԷՐՃԵԱՆ

Մենք Համերգ՝ ի նպատակ Հայ երաժշտանոցի

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ " ՇԱՆԹ ,

9, Ճամի Գաբուսու, 9

ՀԱՀԱԹԻԱ

ARMENIA

Ամերիկացի նշանուոր գրագետներու եւ գրագիտուհիներու աշխատակցութեամբ Ամերիկայի մէջ կանոնաւորաբար հրատարակուած գեղեցիկ պարբերական մը, որ կը պաշտպանէ նաեւ Հայոց շահերը՝ ծանօթացնելով Հայ ազգին գրականութիւնը եւ պատմութիւնը անգլիախօս Ժողովուրդին :

Armenian կը պարունակէ այնպիսի գրական զմայելի էջեր, որոնք հաւասարապէս կը շահագրգռեն թէ՛ Հայ թէ՛ Ամերիկացի հասարակութիւնը :

Ահա՛ թէ ինչ կ'ըսէ Նիւ-Յորք Էյմէրիքըն հանրաժանօթ օրաթերթին գրական բաժնի խմբագրապետը :

—«Armenian», որ Արեւելքի չափ պայծառ ու վճիտ գրականութիւն մը կը ցոյացնէ, կրնայ յաջողակօրէն բազդատուիլ Ամերիկեան գրական Հանդէսներու հետ, պայմանաւ որ վերջիններէն պակսեցուի զիրենք նսեմացնող վաճառանական ոգին» :

Գօլէճներու եւ բախճրագոյն վարժարաններու մէջ անգլիերէն լեզուի դասընթացքին հետեւող բոլոր գրասէր ուսանողներու ջերմագէտ կը յանձնարարուի այս հոյակապ պարբերականը, որուն տարեկան բաժնեգինն է միայն մէկ տոլար Ամերիկայի, եւ տոլարու կէս Թուրքիոյ համար :

Դիմել՝ Editor of Armenia

P. O. Box. 209 Madison Square Station
New York City

Ապառիկ ապագանքներ նկատի չեն առնուիր :



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՃԱԲԱԹ, 19 ՄԱՐՏ 1911

ԹԻԻ 10

ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԹԻԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՐԱՄԻ ԿՍԱՆՔԸ

Դրամը կամ Հարստութիւնը. այս պիտի ըլլայ նիւթը մեր այսօրուան խորհրդածութեան: Դարձեալ շատ սովորական նիւթ մը մարդկային կեանքէն. այնքան սովորական, որ մարդիկ մտածած են ամէն բան, և միայն դրամի ետեւէ կը վազեն: Դրամ, դրամ, դրամ. այս է մարդկային բոլոր գործունեութեանց նպատակը՝ ամէնէն տրկարէն մինչև ամէնէն զօրաւորը: Փոքր լուծայ. փոխ մը և զարհուրելի սեփեփներն ու դրքսները՝ դրամի ետեւէ կը վազեն: Մարդոց գործերն ու զբաղումները դրամ կ'ըսեն, մարդոց իրարու հետ ունեցած յարաբերութիւնները դրամ կը պատահ: Դրամը ամէն բան մտածուցած է մարդոց, և ինքը միս մինակ կ'զբաղեցնէ զանոնք: Կեանքի առանցքը եղած է դրամը: Աշխարհի մէջ ուրիշ ամէն բան պարտախօս է. բարոյական, զգացում, կրօնք, պատիւ, աստիճան ոչինչ խօսքեր են, երբ

դրամ կայ, ամէն բան կայ. դրամը նոյն ինքն կեանքն է, և երջանիկ կեանքը: Հարցուցէք սա՛ պզտիկ աղջիկ դրամի մասին, և պիտի տեսնէք թէ ո՛րչափ տաղանդաւոր պատասխաններ պիտի տան անոնք ձեզի: Դրամը, պիտի ըսեն, ամէն բան է. չաքարն ու շոքոլան ստանց դրամի չեն տար: — Չեմ կարծեր որ մամոնայնն ու է դարձ մէջ այնքան ջերմօտանդ երկրպագուներ ունեցած ըլլայ, որչափ այս դարերուն: Ասկից կը հետեւի, որ մարդիկ շատ լաւ գիտեն դրամը, հարստութեան նշանակութիւնը, և պէտք չունին այդ մասին նոր բան մը սորվելու. և պիտի բան ինձի, եթէ դիւրին դիւրին հարստանալու միջոց մը կայ նոր, շատ լաւ, ըսէք, սիրով մտիկ կ'ընենք: Ժամանակը սուղ է: Դրամ, դրամ, դրամ. դուք ասկից լուր տուէք: Քարոզիչ մը ի՞նչ պիտի ըսէ այս մասին. շատ շատ հազար անգամ կրկնուած բարոյական պատուէրներ՝ ազատ մի՛ ըլլաք, բարեգործութիւն ըրէք, եւ այլն:

— Օ՛, մարդիկ իրաւունք ունին: Շատ չիտակ է իրենց դատելու և գործելու եղանակը, ցորչափ կեանքը իր բնական և զրինական նշանակութիւնը կորսնցուցած՝ դէրուած է այնպիսի պայմաններու մէջ, ուր

մամոնային փառքերը միայն կը տիրապետեն : Սխալ հասկցուած կեանք մը՝ ուղիղ պայմաններով չկրնար երջանկանալ : Մոլորումը կ'առաջնորդէ մոլորութեան, սխալը սխալի, և այս օրէնքը բացառութիւն չունի : Քանի որ նոյն իսկ քրիստոնեաներ մատնուած են սխալ հասկցուած կեանքի մոլորութեան, շիտակ հասկցուած կեանքի մը ջատագովները չա՛տ բաներ ունին խօսելու մարդկութեան, մասնաւորապէս քրիստոնեայ մարդկութեան : Եւ ես ալ այսօր պարզապէս Քրիստոսի զոյգ մը խօսքերը պիտի շեշտեմ՝ այստեղ . — Ձեզի բարեկամներ շահեցէք անիրաւ մամոնայէն . — «Արտէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան» (Պուկ . ԺԶ . 9) : Եւ կը յուսամ թէ այսպիսի շեշտ մը շատ հաճելի պիտի գայ՝ դրամ, զրամ, զրամ պուացողներուն համար : Քրիստոս կ'ըսէ . — Մամոնային բարեկամ եղիք, զրամ շահեցէք, հորուսա եղէք, բայց ի՞նչպէս և ի՞նչու համար . հո՛ս է խնդիրը :

Հարկաւ կը յիշէք որ Քրիստոս այդ նշանաւոր խօսքերը բրաւ՝ Տնտեսին առաւ կը պատմիլէ անմիջապէս ետքը :

Հարուստ մարդ մը տնտես մը կամ մատակարար մը ունի : Ասդիէն անդիէն լուր կը տրուի հարուստին թէ տնտեսը հաւատարիմ չէ իր պաշտօնին մէջ, մարդը զայրացած՝ անմիջապէս կը կանչէ տնտեսը և հաշիւ կը պահանջէ, բսկով թէ այլ ևս դադրած ես պաշտօնէդ : Տնտեսը թէև այլապէս այս յանկարծական կարգադրութեան հանդէպ, բայց ինքզինքը չկորսնցներ, կ'օգտուի իր դիրքէն և իր սիրով խոշոր պարտք ունեցողներէն քանի մը հողի կը կանչէ, և խոշոր զեղչերով նորոգել կուտայ անոնց պարտամուրհակները՝ կամ տետրակները, որպէս զի՝ ատոնց քով կորենայ շնորհ գտնել իր գործը ձգելէն ետքը . քանի որ ո՛չ միայն իր բանար աշխատելու ժամանակը անցուցած է, այլև մուրալու կ'ամէնայ : Ամբաստանուած տնտեսին այս նոր արարքն ալ կը լսէ հարուստը, և կը գովէ իր տնտեսին վարպետութիւնը : Ինչպէս որ կը տեսնէք, ասիկայ անիրաւ գործ մըն է, տնտեսին ըրածը պախալու-

կելի է՝ իբր նոր աղացոյց իր անհաւատարմութեան և զեղծութեանը . բայց իր հարուստ տէրը մատ կը խածնէ, բսկով իր մարդուն վարպետութիւնը, և Քրիստոս ալ ճիշդ այս անիրաւութեան վրայ է որ ուշադրութիւն կը հրաւիրէ . ուշադրութիւն, ուշադրութիւն ըրէ՛ք կ'ըսէ, այդ տնտեսի ըրածին, նա իր ամենէն նեղ և ամէնէն փափուկ մէկ վայրկեանին իսկ չշփոխեցաւ, և իր աղագային համար կրցաւ ճար մը խորհիլ, միջոյ մը գտնել . այս նախաճգ՝ ճարպիկութիւնն է որ հարուստը զեղեց . ես ալ կը գովեմ և կ'ըսեմ ձեզի որովհետեւ դուք՝ այս աշխարհի զաւակներդ՝ շատ խելացի էք, խմատուն էք և ի հարկին կրնա՞նք ձեր ամէնէն նեղ ժամերուն մէջ ալ հնարք մը գտնել՝ ձեր նիւթական դժուարութիւնները հարթելու համար, եթէ՝ այս չափ հոգ ալ ընէիք ձեր հոգեւոր կեանքին, ձեր բարոյական կեանքին ապահովութեան համար, ո՛հ, դիւրին դիւրին պիտի ընդունուէիք յաւիտենական յարկերու մէջ : Ուրեմն մամոնային բարեկամ եղէք, դրամ շահեցէք, և եթէ դուք ձեր այս վտարիկ և քիչ գործին մէջ հաւատարիմ՝ ըլլաք, մեծին, շատին մէջ ալ հաւատարիմ պիտի ըլլաք : Եթէ այս անիրաւ մամոնային հաւատարիմ չէք ըլլար, բուն մամոնան, ճշմարիտ մամոնան, բարոյական, հոգեւոր կեանքի մեծութիւնն ու հարստութիւնը ո՞վ կը հաւատայ ձեզի և կը վստահի : Այս է իրողութիւնը . ձեզ համար փախուստի ճամբայ չկայ . քիչին, անիրաւին, օտարին հաւատարիմ չեղողը՝ չկրնար հաւատարիմ ըլլալ շատին, ճշմարտին, հարապատին :

Այս է, քրիստոնեայք, քմիստոնեայ մարդու համար հալ ստանալու ամուր և ապահով սկզբունքը : Քրիստոս կ'ըսէ, բարեկամ եղէք մամոնային, դրամ շահեցէք՝ բայց հաւատարմութեամբ, ձեր կարողութիւններուն և ոյժերուն բոլոր սահմաններուն մէջ . անոնցմէ դուրս մի կ'ըլլէք . յասիկայ զեղեցիկ ապացոյց մըն է՝ որ նոյնքան հաւատարմութեամբ կը հարստանաք ձեր բարոյական կեանքին մէջ : Եթէ Այս սկզբունքով և այս ուղղութեամբ չհորդստանաք՝ չէք կրնար ծառայիլ ոչ մամոնա-

յին, ոչ ալ Աստուծոյ: Դրամի, հարստութեան մասին ձեր բռնած ուղղութիւնը՝ բացարձակ կերպով պիտի յայտնէ թէ ի՞նչ կ'արժէք դուք Աստուծոյ թագաւորութեան, պատուի և բարոյականի արհաւիրան կեանքին մէջ:

Քրիստոնէութեան այս սկզբունքը արդեօք քրիստոնեաներ գիտեն, հարստութեան, դրամի ետէք վազող քրիստոնեայներ՝ բացարձակապէս յատուկ և պարզ գաղափար մը ունին դրամի և զոյն շահելու եղանակին վրայ:— Ես կը կարծեմ, որ ոչ: Մեր Հայ քրիստոնեաներ՝ պէտք եղածին պէս լուսաւորուած չեն կեանքի և կեանքի պէտքերուն նկատմամբ, մասնաւորապէս մեծ քաղաքներու մէջ, առեւտրական եւ տնտեսական կեդրոններու մէջ: Մեր ազգը՝ սկիզբէն ընդհանրապէս երկրագործ և որհեստաւոր, ապրած է անտեսադիտական այն պայմաններուն մէջ, որոնք չեն խոնգարեր բնական և պարզ կեանքի մը ըմբռնումը: Մեր մասաւորական զարգացման պէտքերն ալ զուգընթաց եղած են անտեսական կեանքի այդ պայմաններուն: Բայց անտեսադիտական այս պայմանները հետզհետէ փոխուեցան անոնց համար, որոնք մեծ քաղաքներու և առեւտրական եւ տնտեսական կեդրոններու մէջ հաստատուեցան, փոխեցին իրենց ապրելու կերպերն ու եղանակները, և այս փոփոխութիւնները հասան սոցալականութիւնի ատիճանին: Տնտեսագիտական կեանքին այս փոփոխութիւնը ազդեց նոյն իսկ փոքր քաղաքներու հարստներուն վրայ:— Տարակոյս չկայ, որ միջավայրերը ուղեւ չուզեն կ'ազդեն մարդոց վրայ, և կ'ազդեն ամէն կերպով, բայց այս ազդեցութիւնը պիտի չնշանակէր այլասեւում, այսինքն այնպիսի փոփոխութիւն մը, որուն մէջ անճանաչելի կ'ըլլայ ազգի մը ինքնութիւնը, նկարագիրը:

Սակաւապէս ժողովուրդ մը, որ իր անտեսադիտական կեանքին որոշ եւ առանձնական պայմաններուն մէջ՝ կրցած է մարմնով և մտքով քաջաւոր ըլլալ միշտ, և պահած է իր վարկն ու պատիւը շահուտապաշտէն մէջ, հարստացած է, և իր հարստութեան հիմնալիք արդիւնքները ան-

մահացուցած է դարաւոր յիշատակարաններով, պէտք չէ որ յառաջգիմութեան. քաղաքակրթութեան սխալ հասկացութիւններուն զոհէր իր նկարագիրը, երջանիկ ըլլալու իր ընտիր յատկութիւնները: Քրիստոս բոլոր ազգ համամիջ նիւթ մըն է, եթէ նոյն ինքն ազնւոյն անհամար, կորսնցնէ իր համեմիջ յատկութիւնը, այլ եւս անպիտան կ'ըլլայ, կը նետուի: Եթէ յառաջգիմութիւնը, որ քաղաքակրթութիւնը, եւ դեռ ինչ որ կ'ուզէք, կորսնցնեն իրենց ճշգրիտ նշանակութիւնը, այլ եւս բան մը չեն արժէք, բնորոշաւոր զիստակաւ կ'ըլլան: Յառաջգիմութիւն, քաղաքակրթութիւն և ինչ, մտար վարդապետութիւն մը, անուն մը կ'ըլլայ լոկ և այս սխալին մէջ բռնուողները դժբախտ կ'ըլլան մինչեւ վերջը:

Եւ մեր մէջ այսպիսի սխալ հասկացութիւն մը տիրած է յառաջգիմութեան մասին: Կ'ըսեն թէ աստիք դրամի, հարստութեան ինդիքներ են: Ետէ՛ ինչպէս որ կ'ուզես և ինչպէս որ կրնաս, բաւական է որ շահես, ուրիշ բանի նայելու չէ: Մեզ համար յառաջգիմութիւնը երեւալ է, ըլլալ չէ: Արտաքին ձեւերու և կերպարանքներու տիրանալ, այս է մեր մէջ հասկացուած յառաջգիմութիւնը: Եւ այսպիսի յառաջգիմութեան մը համար ծախքեր պէտք են, ծախքեր՝ տաւայ շահեւ, և շահեր՝ ապագայ դժբախտութիւններու բարդ բարդ տակոններով:

Եառաջգիմութիւնը բռնի կամ արհուտական միջոցներով չէ, որ ձեռք կը բերուի: Ազգի մը ներքին արժանիքին յայտնի փառքերն են յառաջգիմութիւնը բաւածը: Մաքի և սրտի մշակութեան և զարգացման, մարմնի արդար խնամատածութեան արդիւնք մըն է յառաջգիմութիւնը: Եւ ո՛ր որ այս մշակութիւնն ու խնամածութիւնը չեն հաստատուած բարոյականի վրայ, արդարութեան վրայ, ապարդիւն մնացած են: Իսկ բռնի յառաջգիմութիւնը, որ նոյն ինքն յուլումայութիւնն է, յանգած է ծանր ծանր դժբախտութիւններու: Մինչդեռ այս պիտի չըլլար յառաջգիմութեան, հարստութեան արդիւնքը:

Մեր խորհրդածութիւններու ընթաց-

քին մէջ կեանքի վրայ խօսելու ատեն՝ քանի քանի՝ անգամ աւելի ունեցայ շեշտելութեան երջանիկ կեանքը միայն եւ միայն դրամէն, հարստութենէն կախում չէ։ Թերեւս շատեր դեռ վարանին այս յայտարարութեան հանդէպ, եւ միամիտի կամ նոյն իսկ կեղծաւորի տեղ դնեն զիս, որ չեմ հասկըցած աշխարհը։— Եւ ես պահ մը իրաւունք պիտի տամ այսպէս խորհողներուն, եւ սակայն նոյն ատեն պիտի ըսեմ անոնց, թէ դուք որ դրամի կեանքին մէջ կը կարծէք գտնել հրջանկութիւնը, դուք ալ, ինչպէս կ'ըսէի վերեւ, պէտք եղածին պէս չէք լուսաւորուած կեանքի եւ կեանքի պէտքերուն նկատմամբ։ Դուք կեանքը սխալ հասկցած էք, եւ այսպէս սխալ հասկըցուած կեանքի մըն ալ սխալ պէտքերը շտուգուցած էք, բազմապատկած էք։— Արդեօք կը սխալիմ։ Չեմ կարծիր։ Որովհետեւ կը տեսնեմ որ մարդիկ քրիստոնեայ են, բայց չեն գործադրեր քրիստոնէութիւնը, չեն ասլիք քրիստոնէի կեանքը։ Քրիստոս ըսած է, Մամոնայի բարեկամ եղէք, եւ մինք անոր գետնից եղած ենք։ Եւ գիտէք որ գերութիւնը կեանք չէ։ Քրիստոս ըսած է, զրամ չահեցէ՛ք, հարուստ եղէք հաւատարմութեամբ, արդարութեամբ, բայց հաւատարմութեւն, որդարութիւն պարտապ խօսքեր են մեզ համար։ Ինչո՞ւ. որովհետեւ չենք հասկցած կեանքը. որովհետեւ սխալ հասկցուած կեանքի պէտքերը հոգալու սկզբունքին վրայ հիմնած ենք մեր դրամ շահելու եւ հարստանալու եղանակները։ Եւ չենք ուզեր հասկնալ մեր սխալը. կը վազենք հեռի հեռ. կը յոգնինք, կը կթոտին մեր ծունկերը, կը պտուտիլին մեր գլուխները, կ'ըզմանք պարտասուած, բայց չենք հասկնար մեր սխալը։ Կեանքը հիմայ բազմապահանջ է կ'ըսենք, աշխատելու է, յոգնելու է, որ դրամ վաստակինք։— Բայց ո՞վ կ'ըսէ՝ պէտք չէ աշխատիլ, յոգնիլ։ Այո՛, աշխատեցէք, յոգնեցէք... բայց լաւ հասկըցուած կեանքի համար. եւ կեանքը կը խոստովանի որ բազմապահանջ է. եւ սակայն աւելորդապահանջ չէ։ Մարդիկ աւելորդապահանջ կեանք մը չինած են իրենց հա-

մար՝ այն ալ սխալ հասկըցուած յառաջդիմութեան մը անուանով, եւ այս աւելորդաներուն համար կը նեղուին, կը տագնապին եւ վերջապէս դժբախտ ալ կ'ըլլան։

Բազմապահանջ կեանք մը կը հասկնամ. որովհետեւ կը հաւատամ որ այդպիսի կեանքի մը պէտքերը հոգալ՝ կը նշանակէ մարդու ընտիր կարողութիւններն ու ուղին յատկութիւնները երեւան բերել։ Եւ ստուգիլ՝ երբ մարդ արձակ համարձակ կ'աշխատի իր ոյժերուն եւ կարողութիւններուն սահմանին մէջ, անոր մէջ կը զարգանան եւ կը զօրանան արդարութեան, ինքնաճանաչութեան զգացումները։ Մարդ իրապէս յառաջդիմութեան ճամբուն մէջ է. ոչ միայն իր ֆիզիքական եւ բարոյական կարողութիւնները զօրացած եւ ազնուացած են, այլ նաեւ իր աշխատութեան արդիւնները աճած եւ բարգաւաճած են. դրամ, հարստութիւն, բազմապահանջ կեանքի մը պէտքերը հոգալու այդ միջոցները՝ կանոնաւորուած են իր ձեռքերուն տակ։

Աւելորդապահանջ կեանք մը չեմ հասկընար. որովհետեւ աւելորդները միշտ աւելորդ են, եւ մարդ չկրնար հասնիլ աւելորդ հոգերու. բազմապահանջ կեանքի մը պէտքերը բաւական են արդէն յոգնեցնելու համար մարդը։ Աւելորդ պէտքերու համար, ոչ միայն մարմնի աւելորդ ոյժեր պէտք են, այլ նաեւ բարոյական ուղիւնքներ, կապարէ հոգեր։ Ֆիզիքական մաշում մէկ կողմէն եւ բարոյական տագնապութիւններ վիւս կողմէն՝ կը զաւնացընեն կեանքը։

Արդեօք անոնք, որ դրամի կեանքին մէջ իրենք զիրենք մուցած են, մտքէ կ'անցնեն թէ ինչո՞ւ համար հիւանդութիւնները կը շատնան, ինչո՞ւ համար անաւելութիւնները սովորական բան մը կը դառնան, ի՞նչու համար պէտք եղածին պէս չենք յառաջդիմիր։ Ամէն մարդ կ'աշխատի՝ կ'աշխատի եւ չարդիւնաւորութիւն աշխատութիւնը։

Հիւանդութիւնները, հետեւաբար կեանքին կարճնալը, ինչպէս որ ես կը կործնեմ նոյն իսկ իմ անձնական գիտողութիւններու

արդիւնքով, արդիւնք է մեր տգիտութեան: Մեր արդի հիւանդութիւններուն ամէնէն մեծ մասը ստամոքսի և ջիւերու շուրջը կը դառնան: Եւ եթէ ոչ բացարձակապէս, գոնէ ընդհանրապէս մինք ենք որ կը հիւանդացնենք մինք զմեզ և կը կարճեցնենք մեր կեանքը: Արարիչը այնպէս մը ստեղծած է մարդը, որ կարենայ երկար, շատ երկար ապրիլ՝ հիներու պէս. հերիք է որ մարդու կամքէն ու գիտակցութենէն դուրս պատճառ մը մահ չընէ: Արդ՝ այս արտաքին պատճառներու հաւանականութիւնը հաւանականութիւն կը մնայ մեր իսկ ստեղծած պատճառներուն քով, որոնց վրայ նոյն իսկ չեմք անդրադառնար:

Կ'ուտենք պէտք եղածէն աւելի, և շատ անգամ աւելորդ բաներ կ'ուտենք: Այսպէս գիտութիւնն իսկ այսպիսի եզրակացութեան մը եկած յանգած է: Մարդ իր կեանքին գործարանաւորութիւնը, կենդանութիւնը պահպանելու համար հարկաւոր մեղմելի միջոցն պէտք ունի: Այսչափ մեղմել թէ՛ տեսակով և թէ՛ չափով անհրաժեշտ է: Աւելորդ մեղմել թէ՛ տեսակով և թէ՛ չափով շատ կը յոգնեցնէ ստամոքսը և կը ծերացնէ: Բայց մարդոց անհրաժեշտութեան սրտի եղանակը տարօրինակ է. թէ՛ զըրկանք կայ և թէ՛ չուայութիւն: Դրամի կեանքին մէջ նեղուողները ատեն չունին հաց ուտելու. կո՛ւմ չեն ուտեր, կամ քիչ կ'ուտեն կամ գէշ կ'ուտեն, որովհետեւ գործ կայ, դրամ չ'անելու է. ասի զրկանք մըն է, փեսա մըն է մարմնի համար: Ասոր հակառակ, երբ ատեն գտնեն սեղան նստելու՝ շատ կ'ուտեն, որպէս զի ժամանակին չառնուած մեղմելի տեղը լեցնեն. սաի չուայութիւն մըն է, փեսա մընէ մարմնի համար: Չեմ խօսիր իսկապէս չուայութեան վրայ, որ երբեք չարդարանար: Շուայութիւնը, ի՛նչ չափ ալ հարուստ եղած ըլլայ չուայը, փեսա է, մեղք է թէ՛ քրակի և թէ՛ մարմնի համար: Այս բոլորը դրամի կեանքին համար, բայց ո՛չ երջանիկ կեանքի համար: Եւ չէ՞ որ դրամի կեանքի համար հնարուած են այն բոլոր կեղծումներ ու զեղծումներ, որոնցմով նոյն իսկ մարդուն արդար մեղմելները կ'ապականին:

Ուտելիքի և ըմպելիքի խաղախութիւնները, նոյն իսկ բնական պարզ ջուրերու խաղախութիւնները, սովորական իրողութիւններ դարձած են հիմակուան բարքերու մէջ: Ասոնք ապօրէն գործեր են. և ո՞ր կողմէն ալ դիտես, կը տեսնես որ կեանքը կը հիւանդացնեն ու կը կարճեցնեն: Դրամի կեանքի՝ հրէշային մէկ ըմբռնումին արդիւնքն է այս, որ կը խաղայ ուղղակի երջանիկ կեանքի հետ: Դուք կը կարծէք զրկանքով դրամ չ'անիլ, բարեկամ ըլլալ մամոնայի, որպէս զի երջանիկ ըլլաք, կը կարծէք նաեւ որ չուայ սեղան մը երջանկութիւն է. անդին ուրիշներ միւսնոյն դրամի կեանքին համար, միւսնոյն երջանկութեան համար կը խաղախեն նոյն իսկ մեղմելը: Հրէշային չէ՞ այսպիսի ըմբռնում մը: Խնայէս ուրեմն հիւանդութիւնները չչատնան, և ի՛նչպէս կ'ուզէիք որ կեանքը, որ եղած է իր օրինաւոր առանցքէն, չկարճընայ այսչափ վատագուոր յայտնի խաղաքծութիւններու մէջ:— Ու շաղկութեամբ ուսումնասիրեցէք ձեր կեանքն ու կենցաղը, և պիտի տեսնէք որ մարդիկ իրենք ստեղծած են իրենց հիւանդութիւններէն շատերը: Դրամի կեանքը ամէն օր հիւանդութեան սերմար կ'ածեցընէ իրենց ներսը: Հիներուն երկար երկար ապրիլը առասպել մըն է հիմա: Մարդիկ ո՛րչափ հեռանումն ընտելեն, այնչափ սոսկալի պիտի ըլլայ այս առասպելը: Խնայ հարկ սակայն. պզտիկ քաղաքներու, գիւղերու մարդոց առողջութիւնը, երկարակեցութիւնը յայտնի իրողութիւններ են: Ասոնք բնութեան ծոցին մէջ կը վայելեն ամէն բան անխաղախ իրենց մէջ և իրենց շուրջը. կեանքը առողջ և երկար, և երջանիկ մա՛նաւանդ: Ասոնք արդար և բնական կեանքի մը պայմաններուն մէջ երջանիկն, և դրամի կեանքին մարդիկը, որ երջանկութեան ետեւէ կը վազեն, միշտ մեռալ բաներ մը ունին: Անշուշտ չէք հետեցընել որ այս խօսքերէն, որ շինական կեանքի կը հրաւիրեմ ձեզ. ո՛չ. բնական կեանքի, արդար կեանքի սկզբունքներուն վրայ կը հրաւիրեմ ձեր ուշադրութիւնը: Մեր կեանքի տնտեսութեան մէջ ամէն ան-

բնական աշխատութիւն, ամէն բանի ճիգ և ջանք՝ անպատճառ աղետաբեր են: Բնութիւնը արդար է, անպատճառ կը յղ տօժեացէաները և օրինապանքները, զինքը բանադատողներն և արուեստակողները:

Մտնետային յարեկամ կզէք, դրամ շահեցէք, բայց արդարութեան և լնտկանութեան սահմաններուն մէջ: Այս պայմաններէն դուրս ձեր շինած դրամի կեանքը՝ դժբախտութեան կեանքն է: Դուռն, ով մարդ, երջալիկ լլլալու կոչուած ես, և բանի դժբախտ ըրած ես ինքզինքդ, որովհետեւ ոչ մտնետային կրնաս ծառայել և ոչ ալ Աստուծոյդ: Երկուքին ալ նշանակութիւնը մուցած ես, և դրամի կեանքդ միջին է, վրդովիչ է:

Մտնետայինները, մոծերէն մինչև ամէնէն պղտկները, ինչ բանի արդիւնք են արդեօք, խորհած էք այս մտին: Մեր աղկին մէջ վերջերս իրարու յաջորդող մտանկութեան գէպքերը ուշագրաւ հանգամանք մը տնէին, ասոնց ամէնուն պատմութեան մէջ ալ դրամի կեանքին սխալ հասկցողութիւնը գտայ: Դիտելի է որ մարդիկ զարուսելի տենչ մը ունին հարստութեան, աւելորդապահանջ կեանք մը պատրաստելու համար: Այս գիտի տենչ մը ծայր չծնի, և իր ընթացքն ալ վտանգոտեան ճիւղով աղահալուած է: Ոմանք չգիտնալով, շատեր մահաւանդ գիտնալով կը շարունակեն այդ վտանգաւոր ընթացքը: Հետեւանք անխուսափելի մտանկութիւնն է. ուրիշ կերպ չըլլար:

Այն կեանքը, զոր կը կարծեն երջանիկ ընել, չեն ճանչցած պէտք եղածին պէս, և ասոր համար է որ դժբախտ կըլլան: Կեանքին յարգի ու արժէքը լուռ ճանչնալու մէջ է երջանկութիւնը: Բայց այս հիմնական ծանօթութիւնը մէկդի դրած են դրամի կեանքէն տառապողները, կ'արդաւ հատիս տոնց վրայ. այնպէս մը փարած են իրենց սխալներուն, որ կարծես թէ մտնետայնութիւնը չըլլային, կարծես թէ բնութիւնը իր օրէնքները յարմարեցած ըլլար այս ինքնախաբ դժբախտներու քննաճանչներուն, որոնք սակոյն չեն զգար իրենց դժբախտութիւնը: Կը վազեն

չեն կրնար հասնիլ, կը յոգնին՝ չեն կրնար վաշիւել, կ'աշխատին՝ և չեն կրնար իրենց երեւակայած արդիւնքները ձեռք բերել: Պատճառ. պատճառ որովհետեւ, անգամ մըն ալ չեշտենք, կեանքը չեն հասկցած:

Ինչպէս շատ անգամ ըսած եմ, ըսած են նաեւ արիւնքներ, թէ դրամը, հարստութիւնը նպատակ չէ և պէտք չէ ըլլայ, այլ միջոց մը: Սխալ և մոլոր կեանքի մէջ՝ միջոցը նպատակ եղած է և նպատակն ալ միջոց: Այս շփոթութիւնը խորապէս տարած է մարդուն բարոյակոտոր: Դրամը, կ'ըսեն, ամենակարող է. անպատիւը՝ պատուաւոր կ'ընէ. անաղնիւը՝ աղնուական, անյարգը՝ յարգի, անխելքը՝ խելացի, ու չինչը՝ ինչ, և լին: Ոչ. կը պնդեմ որ այդպէս չէ իրողութիւնը: Այսօր դրամ ունեցող մէկը, երբ փողը չունի այլեւս, մտնետայն է, եթէ պատուաւոր էր երէկ, այսօր չէ այլեւս: Չես վստահիր, չեն յարգեր: Կը զգուշանաս նոյն իսկ որ չտեսնուիս այդպիսիներուն հետ: Դրամը բան մըն է, բայց ամեն ինչ չէ: Շահեցէք զայն, հարուստ եղէք, բայց մի՛ շահուիք անիկոյ, մի՛ հարստանարուիք ասոր սխալներով:

Ինչ կ'արժէ դրամը, հարստութիւնը, երբ զուրկ ես զայն արժեքընելու շնորհքէն և յատկութիւններէն: Բանաբարաբար ծառայէն ալ աւելի խաբուած մըն ես դուն այս վրձակին մէջ: Հիւանդութեան ճիւղն ունի ասկ վտանգուած հարուստ կեանք մը ինչո՞ւ համար չկրնար օգտուիլ իր հարստութենէն: Այո՛, կ'ըսեն գոնէ հարուստ հիւանդը շանսատակ չըլլար, ամեն դիւրութիւն կը վաշիւէ՝ իր տառապանքները մեղմացնելու համար: Շատ լուռ. ուրեմն այսչափ է ասոր նշանակութիւնը, ասոր արժէքը. այսինքն բան մըն է, բայց ամեն ինչ չէ. ես ալ այս կէտը կ'ուզէի հասկըցնել:

Ինչո՞ւ չենք յատաջգիմեր: Ըսի արդէն, որ եթէ յատաջգիմութիւնը ինչպէս անհատի մը, նոյնպէս ազգի մը ֆիզիքական և բարոյական ամբողջութիւնն արատայայտութիւնն է, ինչպէս կ'ուզենք որ մարմնով հիւանդ և բարոյապէս անտակ մէկը կու-

րող ըլլայ յառաջդիմել: Աւելորդապահանջ կեանքի մը գերինները չեն կրնար յառաջդիմել: Ատոնք ցոյցի մարդիկ են, իրենց ոչինչ անապարժութիւններէն աւելի բան մը չեն տեսներ իբր նպատակ իրենց երջանկութեան, մինչ մարդը կոչուած է կեանքը ասրելու հաւատարմութեամբ, արդարութեամբ եւ փայլեցնելու իր կարողութիւնները՝ կատարելութեան այն բարձունքներուն վրայ, որուն հիմերը սրխալ հասկցուած դրամի կեանքին վրայ դրուած չեն: Ոսկիին փայլը կ'աղօտանայ բոլորովին մարդկային արժանիքի այդ բարձր շողողուններուն ստորոտը:

Անիրաւ Մամոնայէն բարեկամներ շինեցէք. բարեկամներս, ձեր յառաջդիմութեան համար. լաւ սերտեցէք կեանքին ճշգրիտ նշանակութիւնը, որպէս զի կարող ըլլաք ճշգրտել նաեւ դրամի կեանքին նշանակութիւնը: Մինչեւ որ հասկըցողութիւնները չճշդուին՝ կարելի չէ որ պրծիք հիւանդութիւններէ եւ ամէն տեսակ բարոյական անանկութիւններէ: Մարդ ինչ որ կ'արժէ, այդ արժէքով պէտք է փայլի: Երբ առողջ չես եւ կ'ուզես առողջ երեւիլ, երբ անանկութեամբ վրդոված ես եւ կը բռնադատես ինքզինքդ որ դէմքն չամպոտի, ի զուր կը ճգնես: Այս ճիգերը տեսական չեն եւ քեզ երջանիկ չեն ընեն:

Երջանկութիւնը պէտք է յորդի ուղղակի ձեր ներսէն: Երբ պատուաւոր ես խղճիդ առջեւ, մի՛ վախճալ, ամէն տեղ պատուաւոր ես: Արդարութիւնը ուղղակի անձէդ պիտի սկսի: Եթէ անձնիկ ես քու խղճիդ առջեւ, աշխատէ որչափ որ կրնաս, չես կրնար պարտկել վերահաս դժբախտութիւններու հետքերը:

Դրամի կեանքին մէջ մի՛ մոռնաք Քրիստոսի տուած պատուէրը, «Արարէք ձեզ բարեկամս ի Մամոնայէ անիրաւութեան»: Դրամը պիտի շահինք իրարու աջակցութեամբ, իրարու վարկով: Արդ՝ այնպէս վարուիցէք ուրիշներու դրամին եւ վարկին հետ, ինչպէս պիտի ուզէիք որ ուրիշներ վարուէին ձեր դրամին եւ վարկին հետ: Այն բանը, որ չես ուզեր որ ուրիշներ քեզի ընեն, դուն ալ մի՛ ընիր

ուրիշներուն: Պիտի տեսնէք, որ այս սկզբունքով կեանքը իր կանոնաւոր եւ արդար պէտքերուն մէջ բաւական պիտի ըլլայ երջանկանալու համար: Պիտի ազատութիւն աւելորդապահանջ կեանքի մը տառապանքներէն ու տաճնապնդներէն: Բարեկամ եղիք Մամոնային, դրամ չահեցէ՛ք, ձեր անձին արդար եւ արժանաւոր պէտքերուն համար. ամէնէն յառաջ այս պէտք է. ետքը ձեր նմաններուն համար, ամէն տեսակ բարի գործերու համար, որովհետեւ յառաջդիմութեան ընդարձակ տարածքներ ունիք ձեր առջեւ, ուր պիտի կրնաք յարգել ու յարգել տալ ինչպէս ձեր մտքին տաղանդը, նոյնպէս ձեր քսակներուն տաղանդը: Աշխարհի խելացի զաւակներուն պէս, ինչպէս էր Աւետարանին Տնտեսը, մտածեցէք ձեր յիսնագոյն վիճակին վրայ. ձեր բարոյական եւ հոգեւոր կեանքին վրայ, եւ պիտի տեսնէք, որ Աստուծոյ թաղաւորութեան մէջ յաւիտենական յարկերու դռները բաց են ձեր առջեւ: Կեանքին ուղիղ եւ ճշգրիտ հասկցողութեան արդիւնքն է այս: Դրամի կեանքին մոլորունիւրուն ջնջումն է այս:

Ուղիղ կեանքով չահեցէք, հարստացէք եւ վայելեցէք, եւ փառաւորեցէք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին. Ամէն:

ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐԻՏՍՍԱՐԴԻ ՄԸ

ՀՈԳԵԿԱՆ ՎՐԴՈՎՈՒՄՆԵՐԸ

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ ՀՐԱԹՐ

Բ.

ԻՆՁՈ՞Ւ ՊԷՏԸ Է ՀԱՒԱՏԱՆԸ Ս. ԳՐԹԻՆ

Սիրելի՛ բարեկամս.

Կարեւոր խնդիր մը կը յուզես քու բազմապիսի հարցումներուդ մէջ: Ատիկա է վաւերականութիւնն ու նուիրականութիւնը այն Դիրքին որ մեր կրօնքին հիմը կը կազմէ, եւ որուն նկատմամբ վերջերս եղած հրատարակութիւններ խռովք պատճառած են հոգիիդ մէջ:

Միշտ բարեպաշտիկ մթնոլորտի մէջ մտնած, չուրջդ գտնուողներէն միշտ ակնածալից վերաբերում մը տեսած՝ քրիստոնէական կրօնքի հիմունքը կազմող նուիրական Մատեանին նկատմամբ, կը վրդավուիս, կը դալթակդիս, երբ կը կարդաս թեթեւ, անպատկառ ոճով գրուածներ՝ աստուածային ճշմարտութեանց ամենավեհ ամփոփոյքը կազմող Գրքին նկատմամբ, որ իրաւամբ Աստուածաշունչ կոչուած է մեր մէջ։ Ստացէ թէ ես չսիրտի սեղէի որ այդ կարգի ընթերցողներով սպաննեա թանկագին ժամանակդ, բայց մարդկային միտքը «ի խնամս չարին է հաստատեալ», եւ վերջապէս հետաքրքրութիւնն ալ լնտծին դժպտում մըն է մարդուն մէջ՝ ուղիղ թէ սխալ ուղղութեան մը վրայ դրուած ըլլայ ան։ Հետեւտակս գիւրաւ կը թացատրուի քու ընթացքդ, չողջողուն ձեւերով ներկայացուած ընթերցողներու ստղծէ համար ինքզինքդ։ Ոչինչ կայ այսպանելի քու քով։ Դատապարտելին անոնք են որ իրենց հրատարակութիւններուն մէջ չեն փնտեր ժողովուրդին օգուտը, այլ իրենց շահը միայն։ Աո՞ր համար է որ մեր գրական հրատարակը ողողուած է թեթեւ, թեթեւ, փետուրի՝ մը չափ թեթեւ գրութիւններով, որոնք ոչինչ ունին չինիչ, օգտակար, հիւսիս, եւ որոնց մէջ յաճախ կը պակսի գրական այդ սեւին համար միակ արդարացողիչ յատկութիւնը, — Սրամտութիւնը։ Ասանք նախատինք մըն են՝ ուղղուած Հայ մաքին հասցէին, տառնք ճիշտ այն են լուրջ գրականութեան հանդէպ, ինչ որ է խեղճառիկ մը մարդկութեան մէջ։ Ասանք կը դուարձանեն, եւ գուցէ հիացումի մէջ կը թողուն պարզամիտները, բայց արդարաւանք կը հրաւիրեն իրենց դատողութեան տէր, ինքնագիտակցութիւն ունեցող անձերուն։

Ցաւալի է որ այդ կարգի հրատարակութիւն մը շատ լրջօրէն ի նկատ տուած եւ, եւ ասիկա բաւական եղած է վրդավումի մտանդու հոգեկան ներքին զգացումներդ։ Բայց իրողութիւնը կը մնայ միշտ իրողութիւն։ Խնդիրը այն է որ դուն լուստբանուիլ կ'ուզես, եւ ինձի համար հա-

ճոյք մըն է խօսիլ քեզի հետ այս կարգի նիւթերու վրայ։

Կը հարցնես ինձի։ — Ինչո՞ւ պէտք է հաւատամ Ս. Գրքին։ Ու կը յիշեցնես մէկ քանին այս տառքութիւններէն որոնք հազարաւոր անգամներ յարուցուեր են Աստուածաշունչ Մատեանին նուիրականութեան դէմ, եւ ամէն անգամուն ալ հերքուեր են հզօր փաստերով։

Յիսուս ինքը ըսած է. «Բնեցէք զիրքերը»։ Ասիկա եթէ ճիշդ է Ս. Գրքին համար, առաւելապէս ճիշդ է ուրիշ ամէն կարգի գիրքերու եւ մանաւանդ Աստուծոյ խօսքին դէմ այնքան անպատկառ կերպով խօսողներու գրութեանց համար։ Այդ վերջինները եթէ լուրջ ու մանրակրկիտ քննութեան մը անցուէին, պիտի չնշուէր իրենց գոյութեան պատճառը, բայց չեն արժեր որուելիք աշխատութիւնը, լուսողայն է քննել Ս. Գրքը, եւ այդ բաւական պիտի ըլլայ մեզի, գտնելու հզօր ապացոյցներ՝ աւսոր ճշմարտութեան, նուիրականութեան վրայ։

Այդ ապացոյցներն երկու կարգի կը բաժնուին, ներքին եւ արտաքին։ Ներքին ապացոյցներն են Ս. Գրքի՝ մարդկային պէտքերու պատշաճեցումը, իր վարդապետութեանց միութիւնն եւ մաքրութիւնը, Գրիստոսի կեանքն ու նկարագիրը, եւ Գրիստոնէութեան ուսուցած ամենաբարձր բարոյականը։ Իսկ արտաքին ապացոյցներն են՝ պատմական վաւերական իրողութիւններ, մարդուս պէտքը՝ յայտնուած կրօնքի մը, Աստուածաշունչին պատմած իրութեանց տողագութիւնը, եւ մարդարեւութիւններէն եւ հրաշքներէն ընձեռուած փաստեր։

Ամէն բանէ առաջ պէտք է գիտնանք որ Ս. Գրքը որչեալ միակ դարու մը մէջ գրուած գործ մը չէ, այլ դարերու ընթացքին մէջ յօրինուած է։ Անոր հեղինակները իրարմէ հետ հեռաւոր ժամանակներու եւ երկիրներու մէջ գրած են անոր զանազան մասերը, առանց գիտնալու թէ իրենց գործը որչեալ տեղ մը պիտի լսնէ։ Բայց կրնանք անպահով կերպով ըսել թէ յատակագիծն Աստուծոյ էր, եւ անոր Ս. Հո-

գիրն ներշնչումովը գրուեցաւ այդ գիրքերու Գիրքը: Մէկ անգամէն չչինուեցաւ ան, այլ աստիճանաբար, ինչպէս հոկայ շէնք մը որ քար քարի վրայ շարուելով կը բարձրանայ: Ամէնէն սկեպտիկն իսկ, — բաւական է որ ողջ մտութեան նշոյլ մը կրէ իր մէջ — հիտցում մը կ'ունենայ իտրեկով որ այդքան տարրեր ժամանակներու և տեղերու մէջ գրուած գիրքեր, որ միակ հաստատուն պատմութիւն մը կ'ընեն մեզի, կրցած են մէկտեղ բերուիլ, և միակ Գիրք մը կազմելով, ապրած են հին գրականութեանց նաւարկումէն հտքը: Անոր հեղինակները չէին կրնար խորհրդասութեան գիւմել, որովհետեւ մէկմէկէ շատ հեռուէր ժամանակներու մէջ կ'ապրէին: Մարդկային ճիգի մը արդիւնք չէր կրնար բլլալ անոնց պահպանումը, որովհետեւ թագաւորութիւններ և կայսրութիւններ կործանեցան, խնամով հաւաքուած և պահպանուած մատենադարաններ ոչնչացան, և սակայն Ս. Գիրքը մնաց, ու կ'ապրէ: Անիկա իր ճամբան կը շարունակէ ամենաբոլորն քննադատութեանց և հալածանքներու փոթորիկներուն և ծովախաղացքին դէմ:

Այս ներքին ապացոյցէն դուրս, ուրիշ հզօր փաստ մըն է իր բովանդակութիւնը, որ չէ հինցած, չի հինար բնաւ: Արդարութեան վրայ հիմնուած կառավարութեան մը, ներքին կեանքի մաքրութեան, և բոլոր առաքինութեանց նուիրականացման գաղափարները նոր ժամանակներու ամենաբարձր գաղափարներէն աւելի վեր կը գըտնուին: Ս. Գրոց ընթերցման մէջ բնաւ վախ չկայ խաբուելու: Անոր մէջ մարդկային բնութիւնը նկարագրուած է այնպէս ինչպէս որ է: Նկարագրի թերութիւնները ներդաժնութեամբ դիտուած չեն հոն, այլ դատապարտուած: Աստուծոյ յնարեալ ժողովուրդին խնայուած չէ երբ անիրաւութեան մէջ կ'իյնայ: Ոչինչ կրնայ գերազանցել իր գրական գեղեցկութիւնը, իր գաղափարներու բարոյական բարձրութիւնը: Հազարաւորներով գիրքեր գրուած են Ս. Գրքին վրայ, և սակայն անիկայ կը մնայ տակաւին անսպառ ներշնչարան մը, ճոխ հանք մը որուն հարստութեանց հաղիւ թէ ձեռք

զպցուած է. բոլոր սերունդները անոր մէջ կը գտնեն ամենամոր և հիմնալի գանձեր:

Եւ սակայն Ս. Գիրքը, անշատաբար իր գաղափարներու գերմարդկային բարձրութիւնէն, իր մէջ ունի զարմանալի հանգիստութիւններ ժամանակակից գիտութեանց հետ: Ամբիկացի նշանաւոր համալսարանական մը, Բրոֆ. Տանա, իր Երկրաբանութեան մէջ կը գրէ թէ «Աշխարհի վրայ հարկը հազարաւոր տեսակներով բոյսեր և կենդանիներ կան, և սակայն անոնցմէ ոչ մէկը (գիտութեան ծանօթ) գոյութիւն առած է մարդուն շոնգձագործութիւնէն հտքը»: Գիտութիւնը կը սորվեցնէ մեզի թէ արեւը չըջան մը ունի երկնքի մէջ, բայց Դաւիթ դարերով առաջ ըսած էր. «Անոր ելքը երկնից ծայրէն է, և անոր չըջանը մինչեւ անոնց ծայրերը»: (Սաղմ. ԺԸ. 7): Յոգ ինչպէս գիտցու թէ հովը ծանրութիւն ունի, և սակայն կ'ըսէ. «Երբ հովին կշիռ կը դնէր (Աստուած) և ջուրերը չափով կը չափէր»: Դեռ վերջերս գիտնականներ կը պնդէին թէ աստղերը կրնան համբուլ: Հիմայ կը հաստատեն Ս. Գրքին հետ թէ անթիւ են անոնք: Արդ, Աստուած Ագրահամի ըսած էր. «Համբէ՛ աստղերը, եթէ կրնաս»: Կրնանք ըսել թէ հեռագիրն ալ նախատեսած է Յոգ. «Կրնա՞ս փայլակներ զրկել որ երթան և ըսեն. — Հո՛ս ենք մենք»: Ծովու ջուրերու չափ ուիլը, և երկրագունդին և աստղերուն կշռուիլը կարելի է նախագուշակուած նրկասել Եսայիի մէջ (Խ. 12): Նոր ժամանակի դիւտ մը կը նկատուի երկրագունդին տեսակ մը օգոնաւ ըլլալը, և սակայն Յոգ ըսած է. արդէն. «Անիկա երկիրը կախեց ոչինչին վրայ»:

Այս մէկ քանի մէջբերումները Ս. Գրքի հաստատմանէն, կը ցուցնեն թէ անիկա չի հակասեր գիտութեան, և կարգ մը կարծեցեալ հակասութիւններ որոնք կը շեշտուին Ս. Գրոց հակասակորդներու կողմէ, վստահաբար առաջ կուգան կա՛մ Ս. Գիրքը լաւ մը չուսումնասիրելէն, և կամ այն իրողութիւնէն որ գիտութիւնը դեռ իր վերջին բառն ըսած չէ, և բնութիւնը ժլատ է իր գաղանիքներն հաղորդելու ամէնէն

յամուս խուզարկումներուն : Իրաւունք ունի Ամբրիկացի նշանաւոր հեղինակ մը՝ ըսելու թէ «Ճրանատկան Կաճառին կողմէ 1806ին յիշուած ութսուն վարկածներէն, որոնք իբր թէ Ս . Գրքի դէմ էին, մէկը չէ մնացած այսօր» : Եւ եթէ աւարկուի թէ զխոտական յալոր տեսութիւնները խնդու տեղ չեն ունեցած Ս . Գրքին մէջ, կարելի եւ իրաւացի է պատասխանել թէ Ս . Գիրքը տրուած է՝ ո՛չ թէ գիտութիւն, այլ կրօնք սորվեցնելու համար մարդկութեան :

Աշխարհի ծագումին վրայ տմէն ազգի մարդիկ վիճարանած են՝ հաղարաւոր վարկածներ մէջտեղ դնելով, որոնց ոչ մէկը կարող եղած է կատարեալ գոհացում ստով միտքերու : Ս . Գիրքն է միայն որ բաւարար պատասխաններ կուտայ մարդուս ծագումին, մեղքի սկզբնաւորութիւն, անոր փրկութեան եւ ապագայ կեանքին վերաբերեալ էական հարցումներուն, եւ այնպիսի պատասխաններ, որ կարելի է գտնուի պզտիկ տղոց իսկ սորվեցնել : Տիեզերքին ինչո՞ւ եւ ի՞նչպէս ծագում առնելուն մասին զխոտական ամենափոքրին տեսութիւնները չեն վնասեր Ս . Գրքին կողմէ սոյլ հարցումներուն տրուած ամենափոքրին պատասխաններուն :

Գաղով արտաքին ապացոյցներու, կարծուածէն շատ առատ են անոնք՝ Ս . Գրոց պատմածները հաստատելու : Տակաւին մօտ ժամանակներու մէջ քննարկներ կային թէ գրելու արուեստը գոյութիւն չունէր Մովսէսի ժամանակ : Բայց գիւտերը գիւտերու կը յաջորդեն : Գիտնականներ վերջին տարիներու մէջ կարգացին նամակներ, որոնք գրուած էին Խաւայիացւոց Եգիպտոսէն ելնելէն առաջ, Ասորիստանի, Բաբելացւոց, Միջագետաց . Կապոյովկիոյ, Հիւսիսային Սուրիոյ եւ Պաղեստինի թագաւորներուն կողմէ : Եւ այդ գրութիւնները կը հաստատեն իրաց այնպիսի վիճակի մը գոյութիւն ունենալ, զոր կը պատմէ Ս . Գիրքը : Այդ նամակները թղթակցութիւն մըն են Եգիպտոսի ուն-Սոդէն թագաւորին կողմէ՝ տղուսներու վրայ գրուած : Ասոնք գտնուեցան 1887ին, Թէլ-Էլ-Ամարնա մայրաքաղաքին մէջ, որ Նեղոս գետին արեւելեան եզեր-

քին վրայ, Թերէի հիւսիսակողմը հողի տակ թաղուած կը մնար :

Ս . Գիրքը կը յիշէ քաղաքներ, մայրաքաղաքներ, մեծ դէպքեր, ճակատամարտներ թագաւորներ, կայսրութիւններ, իրարմէ շատ հեռաւոր ժամանակներու եւ տեղերու մէջ, եւ երբէք չի սխալիր : Բաբելոստանի, Ասորիստանի, Եգիպտոսի հին, թաղուած քաղաքներու մէջ եղած պեղումները ասորի ճշտութիւնը կը հաստատեն : Նինուէի աւերակներուն մէջ պեղումներու միջոցին երեսան հանուեցաւ ընդարձակ մասնաւորութիւն մը, որ կազմուած էր Ասորբանիպալ թագաւորին իշխանութեան միջոցին (668 - 626 Ն . Բ .) : Այս մասունդաբանն արքայական ստատաձեւնութեամբ կազմուած ամէնէն ընդարձակ մասնաւորաններէն մէկն էր, եւ կը պարունակէր պատմական հնագոյն դէպքերու վերաբերեալ տախտակներ, որոնք ընդօրինակուած էին Երիքովի եւ բաբելոնի բնագիր տախտակներէն : Քաղաքը կործանուեցաւ Ասորբանիպալի մահուանէն տարի մը ետքը, եւ մասնաւորաբար թաղուած մնաց քաղաքին կործանումէն առաջ եկած ընդարձակ բլուրի մը տակ մինչեւ մեր օրերը : Քանիս փոքր կը պատմէ թէ ինքը այդ ընդարձակ բլուրը տեսած է Քրիստոսէ 401 տարի առաջ : Այդ բլուրը պեղուեցաւ ու բացուեցաւ 1840ին : Արդ, մասնաւորաբար մէջ գտնուած տախտակները կը պատմեն Ջրհեղեղը, կը յիշեն Նոյի Տապանը, աղաւնիներուն թռցուիլը, սեղան մը չինուիլը, եւլն : Այս տախտակները բնօրինակուած են Քրիստոսէ 1700 տարի առաջուան ուրիշ աւելի հին տախտակներէ :

Այգտեղ գտնուեցան նաեւ ուրիշ տախտակներ, որ կը պատմէին մարդուն ստեղծագործութիւնը, Շաբաթի հաստատութիւնը, հրեշտակներու անկումը, մարդուն անկումը, Բաբելոնի աշտարակաշինութիւնը, եւլն : Այդ մասնաւորաբար հաւաքածոներէն առաջ գտնուած են կոթող մը, եւ տախտակներ՝ ի մասին Ասորբանիպալի արչաւանքին Ովսէի դէմ, նաեւ ի մասին Բ . Թագաւորութեանց գրքերուն մէջ յիշուած ուրիշ դէպքերու :

Նմանօրինակ ապացույցներ կը բերեն մեզի Եգիպտոսի յիշատակարանները՝ Ս. Գրքի պատմութեան ստուգութեան մասին։ Եգիպտացիները կը գրէին իրենց պատմութիւնը քարի վրայ, և Իսրայելացի բազմութիւն թագաւորներու պատկերները քանդակած էին նկարասրահներու մէջ, և անոնները գրած անոնց պատկերներուն տակ աշխատէր որ խորուրդ կտրելի չէ։ Եգիպտոսի բազմութիւն դամբարաններ կը հաստատեն ընդհանրապէս ճշմարտութիւնը, և հիմա հետաքրքիրներ կրնան Մեծն Ռամսէսի մոմիացեալ դէմքին վրայ նշմարել Իսրայէլի մանուկները ջնջող Փարաւոնը, որ չինած է Պիթոմ և Ռամսէս քաղաքները։

Իսրայէլի հետ յարաբերութիւն ունեցող մեծ կայսրութիւններու յիշատակարանները բազմութիւն վիպութիւններ կը բերեն մեզի, որոնք կ'աւելցնեն մեր ժանօթութիւնը Ս. Գրոյ մէջ յիշուած դէպքերու և տեղերու վրայ։

Ս. Գրքը կը յիշատակէ անցեալի և ներկայի դէպքերը և կը նախապաշարէ ապագան։ Տասնեակեց Մարգարէներ ապագայի նախապատկերներու ունեցած են շատ որոշ եղանակով։ Անոնք խօսած են կայսրութիւններու և քաղաքներու կործանման վրայ, իրենց անունով յիշելով զանոնք, խօսած են ի նորոյ հիմնուելիք թագաւորութիւններու վրայ։ Անոնք մարգարէացած են Յիսուսի վրայ, անոր ծննդեան, տեղւոյն, անոր կեանքի դէպքերուն վրայ, և չեն խաբւում։ Յիսուս երբ աշխարհ եկաւ, ակնարկութիւններ ըրաւ այդ մարգարէութեանց, բոտ թէ անոնք կատարուեցան իր վրայ, իր կեանքը համաձայնեցաւ իր ծնունդէն հարիւրաւոր տարիներ առաջ եղած գուշակութեանց։ Նոր Կտակարանին մէջ 265 յիշատակութիւններ կան Հին Կտակարանէն, և 365 յայտնի ակնարկութիւններ։ Քրիստոս գուշակեց իր մահը, ատոր ի՛նչ կերպ ըլլալը, իր Յարութիւնը՝ երեք օր վերջը, իր Համբարձումը։ Նուաւապէս նախապաշարեց Ներսիսապէսի կործանումը, աշխարհի վախճանը, վերջին դատաստանը, ճշգրտօրէն նկարագրեց իր թագաւորութեան նկարագիրը, անոր բնութիւնը և տիեզերականութիւնը։

Յիսուսի գալուստն աշխարհ և անոր կեանքը հաստատուած են նշաններով և հրաշքներով, որ տեղի ունեցած են հրապարակաւ, թերահաւատ վկաններու աչքին առջեւ։ Բնական է ըսել որ եթէ Աստուած իր Ձառակը զրկեց աշխարհ, ուզած էր անոր գալուստն յայտնել մեծ նշաններով։ Գիտենք թէ Յիսուս բազմութիւն հրաշքներ գործեց, կայրերուն աչքերը բացաւ, կաղերուն քաղել տուաւ, հիւանդներ բժշկեց, բորոտներ մաքրեց, գոսացեալ ձուքեր բժշկեց, ծովուն վրայ քաղեց, փոթորիկը խաղաղեցուց, ժողովուրդը կերակրեց, մեռելներ աշխարհէն և մեղքերու թողութիւն տուաւ։ Յիսուս ըսաւ վերջապէս. «Իմ գործերո՛ւս հաւատացէ՛ք»։

* * Ահա՛, սիրելի Հրայր, համառօտ ամփոփում մը՝ ի մասին Ս. Գրոյ կատարած ընթերցումներուն, որոնք խորունկ համուզում մը ներշնչած են հաւատացեալ հոգիներու, անոնց վաւերականութեան և Աստուածայնութեան նկատմամբ։ Թերեւս յաւակցելով յաւիտեականութեան անդրադառնալու այս կարեւոր նիւթին վրայ։ Բաց սյաքանն ալ յուսամ թէ կը բաւէ՝ զօրացնելու երկիւղած ակնածանքդ ի մասին Աստուածաշունչ գրոց, և անոր քարոզած վսեմագոյն կրօնքին՝ Քրիստոնէութեան թեթեւ, հեգնակա՛, գիտական արժէքէ զուրկ զբուռածներ՝ ամպի ամենաջնջին ծուէններ են։ Անոնք երբեք չեն կրնար արատաւորել արեւուն վեհափառ պայծառութիւնը, որուն բովանդակ շքեղութիւնը նշմարելու չեն զօրեր բոժոտ, մթապնած աչքեր։

Աղօթարար

ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

Ս. ԳԻՐՔԷՆ ՅՈՒՔԵՐ

*երանի հեգոց, զի նոքա ժաւանդեցերն զերկեր։

(Մատթ. Ե. 5)

Չարերուն բոլոր բովանդակ երջանկութիւնը աշխարհի օրն փառքերուն մէջ կը սահմանափակուի, և երջանիկ ըլլալու համար

հարկ է որ բնա՛ւ ստոյգ ապագայի մը վրայ չմտածեն։ Անոնք անբան անասուններու նման կ'ապրին, առանց գիտակ ըլլալու իրենց ապրած կեանքին։ Սոսկ ներկան կը նկատեն անոնք, այսինքն աչքերու առջև գտնուած բաներուն ձգողութիւնովը կը խաբուին, ու անոնց ձեռքը՝ որ մ'ալ յանկարծ կը ըկուի անոնց բանականութիւնը, կը մարի ապրելու խանդն ու եւսանդը։ Հոգեկան խաղաղութիւնն ու հուսադրութիւնը պահել կը փորձեն, բայց կը խաբուին չարաչար։

Այդ վիճակին հետեանք են անշուշտ ա՛յն կարգ մը առածները, որոնք ամենէն աւելի տարածուած են և ամենէն ազետաբերներն են եղած մարդկութեան համար։ Այսպէս՝ ոմանց կարծիքով՝ շատ խորհիլը կեանքի անուշութիւնները կը դառնացնէ, և չափազանց ողջմտութիւնը ցաւազին առաւելութիւն մըն է։ Մէկ խօսքով երջանիկ ըլլալու համար քիչ մտածելու է, կ'ըսեն, կեանքին վրայ, ինչ որ անասնութեան կ'իջեցնէ մարդս։

Բայց, ո՛վ մարդ, միթէ Աստուած անձրդ գոթա՞ղդ ընելու համար սուաւ քեզի այդ բանականութիւնը, որ քեզ կը լուսաւորէ քու քառասլին ճամբուզ վրայ մագական լապտերի մը նման։ Ո՛չ ապաքէն ճշմարտութեան հասնելու համար անհրաժեշտ առաջնորդը կրնայ ըլլալ ան։

Չարերու վիճակը աչքի առջև ունենալէ յետոյ, հարկ է սակայն բարի կոչուածներու մասին ալ որոշ գաղափար ունենալ։ Աւետարանի բարին հեզ անունին ներքեւ ծածկուած է. ահա թէ լո՛ւնչու համար Յիսուս, երանի կուտայ հեղերուն։ «Երանի հեղոց, զի նոքա զԱստուած տեսցեն»։

Արդարեւ՝ խառնուածքի թուլութեան, կազմուածքի տկարութեան հետեանք եւ զող բարութիւնը հաւասար է իսկապէս զսշտի խոտին, որ ինքնաբոյս, վտրն ալ կը չորնայ երկրի երեսէն։ ատիկա չէ մեր նկատած բարին, եւ ո՛չ իսկ կեղծիքի քողին տակ, գայլի հոգին՝ ոչխարի մորթին մէջ ծրարուած բարութիւնը։ Անգիտակից բարութիւնը չ'արժեր բնաւ, հարկ է որ մարդ գիտակցօրէն գործէ բարին։ Եւստ-

տուն չար մը աւելի նախընտրելի բարեկամ մը պիտի ըլլար այդ պարագային, քան խոտի նման բարի մէկը։

Աշխարհի տէրն է մարդը, իր տրամադրութեան տակ դրուած է տիեզերքին մէջ ամէն բան։ Նա իր հանձարով ու իմաստութիւնով հարկ է տնտեսէ ամէն բան։ Աստուած այնքան կարեւորութիւն տուած մարդուն, որ երկրի կենդանիներուն իւրաքանչիւրին անուն տալ առաջարկեց, բան մը որ միծնշանակութիւն ունենալու է միզի համար։

Բարի ու չար գործերը մարդու խառնուածքէն կախում ունին, և մերթ իմաստուն ու գիտակից չարերու գործերէն կը ծնի բարիք, մինչ տգէտ ու ապուշ բարի մարդուն բարի գործ կարծածէն յաճախ կը ծնին չարիքներ։

Աւետարանի բարին, սակայն, հեզը, գիտակցական բարութեան կիրարկումն հեղինակ մարդոց կը տրուի։ «Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր»։

*
* *

Աստուած էսպէս բարի ստեղծեց մարդը, եւ անոր սուաւ ամէն տեսակ ազնիւ կարողութիւններ։ Անկումը, սակայն, փոխեց անոր ճակատագիրը, չարին յաղթանակին էր այն, և այսօր աշխարհ գերութեան չղթայ մըն է մարդուն համար, կուպանք մըն է դրուած հոգեկան ամէն տգնիւ ձիւքերուն վրայ, յաւիտենական սարքկութիւն մըն է, որուն ոչ ոք կրնայ ազատութեան ճամբայ բանալ, բացի Քրիստոսէ որ տէրն է ազատութեան և շնորհաց։

Եւ որպէս զի երջանիկ ապրինք և զերծ այդ կապանքներէն և պրկումներէն, հարկ է հաւատք ունենանք Անոր վրայ։

Գուհիկ պատահարներ, ու տարտամ մոտահոգութիւններ, ճիւղալային գործեր և քստմեղի արարքներ, աշխարհի շրջանը կ'ընեն, և մարդուն ճակատագրին վրայ մեծ ազդեցութիւն կը գործեն։

Աշխարհ անիմուած թատերաբեմն է ամէն տեսակ չուառութիւններու, ուր հաճոյքները թունաւոր են, և ուր երջանկու-

Թեան մէջ թեր լոյն դրած են : Այդ ամենուն մէջ՝ սակայն՝ հեղերը իրենց մասնաւոր դիրքն ունին, բնաւ չեն կորանցներ իրենց հաւատարակչութիւնը, իրենց պաշարիւնութիւնը : Եւ Քրիստոնէական ողջմտութիւնով կը հանդուրժեն ամէն փորձանքի . ահա այդ հեղերն են որ, բարի ու բատին լայն առումով Քրիստոնէական են որ պիտի ժառանգեն երկիրը :

Անդրադատմանք պահ մեր անձին վերայ . արդեօք մենք Քրիստոնէայ ենք թէ ոչ : Խնդրական կը մնայ միշտ ան . ու ոչ ոք հաստատապէս կրնայ բան մը ըսել իր իսկ ներքին համոզումներուն մասին : Մարդիկ միշտ կը սիրեն ծագող պտուղի, միշտ կեղծել ինքզինքնին, միշտ ուրիշներու առջև իրենց գոյնը կը պահեն քողի տակ, վասն զի ճշմարտութիւնը անոնց համար այնպիսի լոյս մըն է . որմէ կը տկարանան իրենց աչքերը :

Երբէք անձանձրոյթ տարած ենք զրկանքներ յանուն ճշմարտութեան :

Խոնարհ եղած ենք հանդէպ մեր նմաններուն : Համբերած ենք վիշտերու : Եղած ենք համբերատար ու հեղ, վերջապէս նմանած ենք մօր երկնաւոր Վարդապետին : Թերեւս ոչ . ու հոս է մեր դժբախտութիւնը, որ մեր դատապարտութեան քուէն մեր ձեռքով կուտանք : Այս ինքնադատ խեցեղծիւրը քստմեկի է : Հեղութիւնը հագի ազնուական պտուղներէն մէկն է : Ոչ այն ամենը որոնք գիտեն թէ ո՞վ է Յիսուս . պիտի մանեն Անոր պատրաստած օթեւաններուն մէջ . այլ անձնք միայն՝ որոնք նմանած են Անոր . եղած են հեղ . համբերած են ամէն աշխարհային փորձութիւններու, որոնք Աստուծոյ կողմէ պատրաստուած են . հաւատաւորին հաւատքին ջերմութիւնը չափելու համար :

Անտարակոյս մենք ալ Յիսուսի ժամանակակից Հրեաներուն նման կուրացած պիտի մնանք, մտածելով որ արքայութիւնը մերը չպիտի ըլլայ, մտածելով որ չունինք այն յատկութիւնները զորս կը փնտէ հոս մեր վրայ . ըսել կ'ուզեմ հեղութիւն, որ զարդն է կրկնութեան եւ առաքինութեան վարձք կ'ապահովէ էրիկ մարդերուն :

Պէտք է փոխենք մեր սրտերը, հակառակ պարագային քրիստոնէայ չենք կրնար կոչուիլ . «Պարտ է ձեզ ծնանիլ վերջստին» :

Նոյն իսկ Յիսուսի ժամանակ՝ երբ Աւետիաց երկիրը կամ Երուսաղէմ այլ եւս իրենց սեփականութիւնն էր, եւ գերիշխան պետութեան մը հովանին կամ անուրը կար իրենց վրայ, Հրեաները երկիրը . . . կը փնտռէին, գերազանց երկիրը : Բայց Յիսուս, ո՛չ Արարհամու, ո՛չ Իսահակի, ո՛չ Յակոբի, ո՛չ Յուդայի եւ ոչ իսկ Մովսէսի ու Յիսուսի խոստացուած Աւետիաց երկիրին կ'ուզէ ակնարկել, այլ այն երկնաւոր երանութիւնը, ուր ամէն երկրաւոր ու ստորնաքարչ կիրքեր կը լռեն, եւ ուր Աստուծոյ սէրը կը թագաւորէ, այդ յաւիտեական երկիրը, Աստուծոյ թագաւորութեան մայրաքաղաքը, որ մեր ամենուս ալ ակնկալութիւնն է :

Եւ իրօք, հեղութեամբ ու համբերութեամբ ձեռք կուգայ այդ երկնաւոր հայրենիքը : Անմեղութեան ու անկեղծութեան երկիրն է այն, ուր ոչ մէկ որդայոյթ եւ ոչ մէկ հաղը կրնայ գմեղ իր մէջ ձգել, ինչպէս այս աշխարհը, իր փորձութիւններով կ'ընէ միշտ :

Այդ երկրին մէջ մեր տկարկած չարերը գործ չունին, անոնք վտարուած են առ յաւէտ, անոնց երանութիւնը հոս է . անոնց արքայութիւնը հոս միայն կրնայ ըլլալ, եւ հոս միայն կ'ուզեն արդէն ապրիլ : Դուք կը ճանչնաք չարերն ու անոնց գործերը, ասոնց հակառակ ուղղութեան մը հետեւիլը՝ կ'ապահովէ ձեզի երկիրքը : Աստուծոյ կրնաք ժառանգել երկնաւորը եւ անոր բոլոր շնորհները, որոնք խոստացուած են մեզի ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որ Աւետարանով տուաւ դանոնք մեզի :

Աստուած սակայն համեմատութեամբ մեր չարիքներուն չի պատժեր զմեզ, զթութեամբ կը շարժի, քաղցր է իր վերաբերութիւնը եւ սիրալիր իր խնամքը : Արդարը՝ սակայն՝ յաւիտեան պիտի ապրի Աստուծոյ շուքին ներքեւ, հեղ մարդիկը պիտի ժառանգեն երկիրը : Այս եւ ասոնց նման երանական խոստումներու որքան

չառ վարժուած է մարդը, եւ որքա՞ն յափ-
րացած, որքա՞ն ուժացած է անոնցմէ :
Արդարն իր հաւատքով, ու բարին իր
բարութիւնով, հեղը՝ իր հեղութիւնով
Աստուծոյ սիրելի կ'ըլլան, բայց ի՞նչու այդ
երջանկութեան աւետիսները խոյժ մը չեն
ըլլար մեզ՝ դէ՛պ ի այդ առաքինութիւնը
ուղղուելու :

Անիկա սը զմեզ ստեղծած է, գործնա-
կան չառ դասեր կուտայ մեզի միշտ . սա-
կայն մենք չենք ուզեր օգտուիլ անոնցմէ :
Մանկավարժի մը պէս չառ փափկութեամբ
կը վարուի, կը բարձրացնէ մարդերէ չա-
տերը, եւ յետոյ կը խոնարհեցնէ զանոնք,
եւ իրենց փառքերու մոխիրներուն վրայ
տուայտիլ կուտայ, յետոյ անոնց վրայ
բարձրացնելու համար ուրիշներ . կը չափա-
ւորէ այսպէս, եւ կը կրճատէ անոնց ապս-
տամբական արտադրութիւնները :

Համոզուելու համար մեր ըսածներուն
ճշմարտութեան, պէտք է մարդ կարդայ
ամբողջ Ս. Գիրքը : Առածին լացատրու-
թիւնը չառ ճիշդ է .--Աստուած շարունակ
սանդուղ կը շինէ :

Սուրբ Գրքի ամբողջ իմաստասիրու-
թիւնը այդ գաղափարին խտացումն է .
բաւական է որ մարդ աչքի տա՛նք ունե-
նայ Յօրի Գիրքը, եւ պիտի համոզուի իս-
կոյն, ուրիշ քաղցրութիւն մ'ունի Իմաս-
տութեան գիրքը որ համակ մարմնացումն
է Աստուծոյ զործերուն :

Իսրայէլայիներէ մաս մը մարդիկ, չնոր-
հիւ իրենց ջերմ հաւատքին, գտան փրկու-
թիւնը եւ Աւետեայ երկիրը : Հեզեթն ու
համբարատար մարդիկներն էին անոնք, ու-
րոնք հաւատքն ունէին միայն պէնք ու
վանան : Այդ հաւատքը դիւցազնական քա-
ջութեան տուճնորդեց Յեառն, Սամի-
սոնը, Յելիթայէն, Սամուէլը, Դաւիթը,
Մակաբեան եօթն եղբայրները եւ Բրիտու-
նէութեան դիւցազն մարտիրոսները :
Ասոնք օրինակ կրնան ըլլալ մեզի : Պօղոսի
կեանքը լաւ ուսումնասիրենք, Ստեփան-
նոսի սուրբ երանուելու քանի մը վայր-
կեաններուն վրայ խորհրդածենք, Թադէի
արիւնին յառենք աչքերնիս, Բարթողի-
մէոսի գերծուած մօրթին վրայ աչք ձգենք,

դիւցազն Սանդուղսար եւ Սրբունի Հօրի-
սիմէն սերտենք իրենց սուրբ կեանքին
հիմնեան լօղիկին մէջ : Թ՛հ, որքան բարձր,
որքան սքանչելի դասեր կը պարունակեն
անոնց մարմնասարսուռ վկայարանութիւն-
ները : Ասոնք Աւետեայ աշխարհը գտան,
ժառանգեցին երկինքը, որ փոխաբերական
կերպով երկիր է եղած Յիսուսի բերնին մէջ :

«Երանի հեղոց, զի նորա ժառանգե-
ցին զերկիր» :

ՊՍԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ

Նիւթերու տւաւտութեան պատճառով, այս
շաբթու կարելի չեղաւ որոշեալ բաժինը յատկա-
ցնել ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ :

ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ

Դ. (*)

Մուշեղ Եպիսկոպոս կ'ըսէ թէ «Տախտ-
ւին եւ ոչ մէկ տեղ Հին Կտակարանին մէջ
կը հանդպինք հաստուածի մը, որուն մէջէն
կարելի ըլլայ սկզբնական մեղքի վարդա-
պետութիւն մը յառաջ բերել» :

Կ'անենք Եսային, եւ անոր վկայու-
թիւններովն սկզբնական մեղքին վտրդա-
պետութեան գոյութիւնը Հին Ուխտին
մէջ՝ կը հաստատենք, իսկ Նոր Ուխտէն,
որ հոգն լրացւցիչն է եւ վաւերացումը,
կը դիմենք Մատթէոսի, Յովհաննու եւ
Պօղոսի թղթերուն :

Հին Ուխտէն Եսայի կը խօսի մեզ .
«Նա զմեզս մեր բառնայ եւ վան մեր չար-
չարի . . . նա վիրաւորեցաւ վան մեղաց
մերոց . . . եւ նորա վիրօքն բժշկեցաք . . . եւ
Տէր մասնեաց զնա առ մեզս մեր . . . յանօ-
րէնութեանց ժողովրդեան իմոյ ի մահ մատ-
նայալ . . . եւ զմեզս նոցա նա վերացուցէ . . .
եւ նա զմեզս բողմաց վերացոյց եւ վան
անօրէնութեանց նոցա մասնեցաւ » (Եսայի
ԾԳ, 1-12) :

Իսկ Նոր Ուխտէն Մատթէոս կը գրէ
Հրեշտակին աւետեանն մէջ . «Ծնցի սրդի, եւ
կոչեցես զանուն նորա Յիսուս, զի նա
փրկեցցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւր-
եանց» : (Մատթ . Ա, 20-21)

(*) Շար. Զ, Թիւ. 1

Յովհաննէս Մկրտիչ իր քարոզութեան մէջ կ'ըսէր «Ահաւասիկ Գառն Աստուծոյ որ բառնայ զմեզս աշխարհի» : (Յովհ. Ա. 21) : Հրեշտակին խօսքերը եւ Յովհաննու քարոզութիւնը կը հաստատեն թէ սկզբնական մեղաց գաղափարը գոյութիւն ունէր Հին Ուխտին մէջ, եւ այդ մեղաց բարձունքը Յիսուսով պիտի կատարուէր ըստ գուշակութեան Յայեայ : Առաքեալն ալ այդ վարդապետութեան գոյութեան գիտակ' որ Հին Ուխտի դարերու ընթացքին մէջ չէր մոռցուած' կը գրէ . «Թէպէտ դուք Մեղաց ծառայ եիք, սակայն սրտանց հնազանդեցաք այն վարդապետութեան գաղափարին որ ձեզի յանձնուեցաւ» (Հռոմ. 2. 17) : Նոյն ինքն Պողոս կը գրէ դարձեալ առ Հռոմայեցիս . «Որ մասնեցաւ վան յանցանոց մերոց, եւ յարեալ վան զմեզ արդարացուցանելոյ : (Հռոմ. Գ. 25) : Իսկ ցոյց տալու համար թէ ո՞րն է այդ յանցանքը, այդ մեղքը որուն համար մասնեցաւ, կը խօսի մեզ դորձեալ Հռովմայեցւոց թուղթովը . «Վան թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց» : (Հռովմ. Գ. 25) : Եւ այս չափ բացատրութիւնով չի գտնար, կ'ուզէ շատ որոշ կերպով ըսել թէ մէկ մարդու մը՝ Ադամայ մեղանշումովը մարդկային Ազգը սկզբնական մեղաց տակ ինկաւ՝ ո՛չ միայն մինչեւ ի Մովսէս, այլ անտի մինչեւ Արդարութեան գործադրութիւնը : Ահաւասիկ Պողոսի խօսքերը . «Զի որպէս ի միջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին եւ ի մեղաց անտի մահ, եւ այնպէս յամենայն մարդիկ տարածեցաւ մահ, որով ամենեքին մեղան . քանզի մինչեւ յօրէնան մեղք էին յաշխարհի, բայց մեղք ո՛չ համարէին, ուր օրէնք ոչ իցին : Այլ թաղաւորեաց մահ յԱդամայ մինչեւ ի Մովսէս, եւ ի վերայ չյանցուցելոցն ըստ նմանութեան յանցուածոցն Ադամայ . ապա ուրեմն որպէս միոյն յանցանք յամենայն մարդիկ գատապարտութիւն, նոյնպէս եւ միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ արդարութիւն կենաց» : (Հռովմ. Ե. 12-19) :

* Սյդ կրօնի գրքին մէջ Մուշեղ Եպիսկոպոս մէկէ աւելի վարդապետութիւն

ունի Հաղորդութեան Ս . Խորհրդոյն մասին . առանց նկատի առնելու Ս . Աւետարանի, առաքելոց, հայրապետաց քարոզած բացառիչ խօսքերը, առանց նկատի առնելու դարերու ընթացքին մէջ Հայ Եկեղեցւոյ պահպանած անալլայլ վարդապետութիւնը : Տեսէք ի՞նչ կը գրէ Մուշեղ Եպիսկոպոս . «Յիսուս իր աշակերտներուն հրամցուցած Հացին եւ Գինին մասնաւոր նշանակութիւն մը տալ ուզեց, զոր իբր իր Մարմինը եւ Արիւնը տուաւ անոնց» : (Բայց Յիսուս չբռնէ իմ մարմինս կէ Արիւնս, այլ սոսկ իր Մարմինը եւ Արիւնը . իբրը աւելորդ եւ զայնակողեցուցիչ է : Մուշեղ Եպիսկոպոս պէտք է զգուշանար խեղաթիւրելէ Աւետարանի իմաստները, իր կողմանէ իբրի նման բառեր աւելցնելով :

«Քրիստոսի գործածած այդ Մարմին եւ Արիւն բառերը, իրենց մէջ վարդապետական ո՛րեւէ ոյժ չունին . . . Եկեղեցիներէն «ոմանք, Հաղորդութեան հացին եւ գինին «մէջ Քրիստոսի իրական Մարմինը եւ Արիւնը «կը փորձուին տեսնել . . . Յունական Եկեղեցին մեր Եկեղեցիին հետ ընդունեց ժէ . «դարուն գոյացափոխութիւն ըստին տակ «ծածկուած վարդապետութիւնը . . . Հայկական Եկեղեցին մերժած է գոյացափոխութեան վարդապետութիւնը . թէպէտ «Պատարագամատոյցին մէջ գործածուած է, «բայց պէտք է ըսել թէ ասիկայ վերջապէս «մուս է . . . Հաղորդութեան խորհուրդը «Հայ Եկեղեցւոյ համար աւելի յիշատակ «մըն է . հացը եւ գինին նկատուած են Ս . «խորհրդանշաններ, որոց մէջ կը դաւանի «նոգեկան զօրութիւն : Քրիստոս անոնց մէջ «հոգեւորապէս ներկայ կը գտնուի . . . այդ «նշանակներով համապօր կ'ըլլան Քրիստոսի «ճշմարիտ Մարմնոյն եւ Արիւնին . . . չստանալ կ'ընդունին որ Քրիստոս մարմնապէս «ներկայ է Հաղորդութեան մէջ, բայց այդ «գաղափարին մէջ կը նշմարուէ՞ տեսակ «մը իրապաշտութիւն, որ համաստեմծութեան «նկարագիր կուտար Հաղորդութեան» : Ուրեմն Մուշեղ Եպիսկոպոս մէկէ աւելի ըմբռնում ունի Հաղորդութեան մասին : Նախ կ'ընդունի թէ հացը եւ գինին է իբր Մարմին եւ Արիւն Յիսուսի Քրիստոսի :

Բ. — Հաղորդութիւնը սոսկ յիշատակ մըն է Յիսուսի մահուան նշանակ, պատկեր եւն. : Գ. — Մարմին եւ Արիւն բառերը իրենց մէջ ո՛րեւէ վարդապետական ոյժ չունին : Դ. — Հաղորդութեան հացը եւ գինին Քրիստոսի Մարմնոյն եւ Արեան չի փոխարկուիր. Ե. — Յունական եւ մեր Եկեղեցին ժէ. դարուն ընդունեցին գոյացափոխութիւն բառին տակ ծածկուած վարդապետութիւնը, թէպէտ խորհրդատետրին մէջ փոխարկում բառը կայ, բայց վերջումն է : Զ. — Հացը եւ Գինին կը նկատէ Ս. «խորհրդանշաններ, որոնց մէջ Քրիստոս հոգեւորապէս ներկայ կը գտնուի, «այդ նշանակները համադր կ'ըլլան Քրիստոսի ճշմարիտ Մարմնոյն եւ Արեան» :

Կը պատասխանենք թէ՛

1. Հացը Յիսուս ամենկով օրհնեց, բեկանեց, տուաւ Առաքելոյց եւ ըսաւ. «Ասէք, կերէք, այս է Մարմին իմ» . այդ հացը որ նիւթականապէս տեսակաւ բաշարչ էր, ունէր համ եւ հոտ, Առաքեալք հաւատացին եւ ճաշակեցին ընդ տեսակաւ հացին՝ զՄարմին Տեառն : Զբախն անոր. «Տէր, դու կ'ըսես թէ իմ Մարմինն է այս հացը, զոր սուրի ձեզ ուտելու համար, «բայց ո՛րք մեր ամէն բաղարջակերաց տօնին հացն է, նոյն համը, նոյն հոտը ունի. «Մարմինի նմանութիւն չունի» : Զբախն անոր՝ ինչպէս կ'ըսէին Հրեաները, «Ինչպէս կ'ըլլայ որ քու Մարմինդ կուտաս մեզ ուտելու» : Այո՛, հաւատացին Առաքեալները թէ այն հացը Մարմինն էր Յիսուսի : Ասոնք այն Առաքեալներն էին, որ կը տարակուսէին Յիսուսի յարութեան վրայ. եւ երբ իւրաքանչեւ կանայք կ'աւետէին անոր յարութիւնը, անոնց խօսքերը չաղփաղիութիւն կը թուէին իրենց, եւ չէին հաւատար, մինչդեռ պատճառ մը չունէին չհաւատալու, քանի որ Մարգարէք գուշակած էին անոր յարութիւնը, եւ Յիսուս քանիցս յայտնած էր իրենց թէ երեք օրէն յարութիւն պիտի ունէր : Այս ա՛յն Առաքեալներն էին, որ դիտէին թէ Յիսուս է յարութիւն եւ կեանք. գիտէին թէ Յիսուս էր որ յարութիւն տուաւ չորեքօրեայ թաղուած Ղազարու, Նայինի պատանւոյն, ժողովրդապետին աղջկան, եւ յաղմթիւ մտեալներու՝ ի խաչին մուկուլութեան պահուն. եւ անոնցմէ միայն վարանքը ա՛յնչափ յառաջ գնաց որ չուզեց հաւատալ անոր յարութեանը, մինչեւ որ չօչափէր իր կողմ : Եւ սակայն ա՛յնչափ տարակոյսով լիցուած այդ Առաքեալները հաւատացին թէ այն

հացը զոր ճաշակեցին, Մարմինն է Քրիստոսի : Խեղճ Նիկողիմոս չէր կրնար ըմբռնել թէ այն որ միանգամ ծնած էր ինչպէ՞ս կրնար նորէն ծնիլ : Ս. Հոգիով ծնունդը ըմբռնել չկրցող Նիկողիմոսը ինքն ալ քուրդեց թէ հացը, զոր կ'օրհնէինք, Մարմինն է Քրիստոսի : Այսպէս խմացի՛ր եւ գինւոյն համար ի կարգին :

Այս հաւատքը ա՛յնչափ հաստատ հիմքում էր նոյն իսկ կուսապաշտ եւ հալածող ռամիկ ժողովրդեան մէջ, որ Առաքելական դարուն Քրիստոնէից հալածմանաց պատճառներէն մին կը նկատուէր, եւ աւելի կը զայրացնէր, եւ հալածանքը ուժգնութեն կը սաստկացնէր : Անոնք կ'ըսէին. «Քրիստոնէայք գիշերները հաւաքուելով մարդու միս կ'ուտեն եւ արիւնը կը խմեն» : Քրիստոնէից պատարագին շփոթ գաղափարը :

Տիրեբեայ ծովուն եզերքը, լինթրիքէն շատ առաջ Յիսուս սորվեցուցած էր աշակերտաց թէ ինքն է «Հացն կենաց, որ յերկնից իջեալ... եթէ ոք ուտիցէ ի հացէ յայտնանէ, կեցցէ ի յաւիտեան, եւ հացն զոր ես տայ Մարմին իմ է, զոր ես տայ վասն կենաց սշխարհի» : (Յովհ. Զ. 52) :

Ինչ որ վերջին դարերու մէջ իմաստասիրական դպրոցներ պիտի բռնէին հացին եւ գինւոյն համար, եւ չպիտի կորննային ըմբռնել հացն Մարմին, եւ գինին՝ Արիւն, եւ պիտի հնարէին նոր վարդապետութիւն մը՝ հացին եւ գինւոյն մէջ Քրիստոսի նիւթական կամ հոգեւոր ներկայութեան ըմբռնումը, կամ սոսկ յիշատակ մը եւ ոչ այլ ինչ, նոյն տարակուսանքը յայտնեցին զինքը ունկնդրող Հրեայք եւ «Մարտնէին ընդ միմեանս եւ տաէին, զի արդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր ուտել : Յիսուս կը պատասխանէր անոնց. «Եթէ ոչ կ'ըրիք զՄարմին Որդւոյ մարդոյ եւ արքիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս, զի մարմին իմ ճեմարիս կեցալուր է եւ արիւն իմ ճեմարիս քմպելի. որ ուտէ զՄարմին իմ եւ ըմպէ Արիւն իմ, նա յիս քնակեացի եւ ես ի նմա» : (Յովհ. Զ. 54) :

ՀԱՍՅԵԱԿ ՔԼԵՅ. ԷՔՍԷՐՔԵԱՆ

(Գնացեալք յ' ջորդով)

ԱՐՏՕՆԱՏԻՐ

ՀԱՄԱՅԵԱԿ ՔԼԵՅ. ԷՔՍԷՐՔԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱԳԻՐ

ՀԱՐԱՐԱՅՐ ՔԼԵՅ. ԿԷԶԻԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ «ՇԱՆՈ»

Ղալաթիա, ձմաի Գաբուսու, թիւ 9

“ՏԱՃԱՐ,,Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուց
Արսասահմանի համար	10 ֆրանկ
Ռուսիա	4 ռուբլի
Ամերիկա	2 օլար
Զեռֆէ կը ծախուի պահկը	40 փարա

Տաւր բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու :

Իսկ հինգ բաժանորդ գտնողը պիտի կրնայ մէկ թերթ ստանալ կէս բաժնեգինով :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆԻՆ ԴԻԻՐԱՄՍՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է գիմը առ Զարմայր Քահանայ Կեզիրեան, Կ. Պոլիս, Պեշիքթաշ, Հայոց եկեղեցի

در سعادتده بشکطاشده ارمنى کلیسائنده (داجار) غزته سی مدیری پاپاس زارماير

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue « DADJAR »
Constantinople, Béchiktaché, Eglise Arménienne.

ԱՐԱՐԱՏ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՍԷՉՄԻԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻՆ

Կը հրատարակուի պաշտօնական, կրօնական, եկեղեցական, մանկավարժական, եւ գրական-բանասիրական բաժիններով: Ռուսոյ համար տարեկան 4 թիւ. արաւսահման 5 թիւ: Հասցէ՝ Rédaction de la Revue ARARAT, Etchmiadzine (Caucase):

ԱՐՕՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ

Ընդհանուր Գրական, Գիտական-ժողովրդական, եւ խաղաղասիրական

Խմբագիր-Հրատարակիչ՝ Ն. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Կ'աշխատակցին Ռուսահայ եւ Թրքահայ ծանօթ գրողներ: Հրատարակուեցաւ Բ. տարւոյ (1911) Յունվարի թիւը:

Տարեկան բաժնեգիրն՝ Մշակի բաժանորդներու համար 4 թուրքի, իսկ ոչ-բաժանորդներու 6 թիւ: Հասցէ՝ Rédaction de la Revue arménienne AROR, Tiflis.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՍԱՄՄԱՆՑ ՏՈՒՆ. — Պատմավեպ. — Անգիր պատմախօսներէ քաղելով վերածեց աշխարհաբարի՝ Տիգրան Չիքունի: Սասունի, Վանայ կամ Արծրունեաց տան վրայ հիւսուած անգիր դիւցազնավէպին մէկ ճիւղաղբոյցը, խիստ հետաքրքրաշարժ, եւ շահեկան՝ ազգագրական տեսակէտով: Գին 5 զրշ:

ՅԻՏԱՏԱԿԱՐԱՆ. — Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագրերը, գրութիւնները, եւն: Կազմեց Վ. Գ. Զարդարեան. — Հրատարակուեցաւ ԺԷ. — ԺԸ. միացեալ թիւը, որ կը պարունակէ մասնաւորապէս Ապօր Եւ Նուպար դերգաշտաններու, Աբրահամ Բարթոլ փաշայի, Պօղոս պէյ Եռասուֆի կենսագրութիւնները, զարդարուած 21 պատկերներով Գին 5 զրշ:

ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ. — Ուղեւորութիւն Բաղլ Ռուպախ գերմանացոյն. թարգմանեց գերմաներէնէ Վ. ձանիկեան. — Հրատարկ. Բիշտօֆճեան եղբ. «Արամազդ» գրատան, Կալաթա, Գուլէ Գափու, թիւ Դին 5 զրշ:

ՀԱՄԱՍՆՈՒՆԴ ԵՒ ՍԵՂԱՆ Ի ՔԱՌԱԿԵՐՊՆ. — Պատրաստեց Յակոբ Յ. Ալլահ-վերսեան, հեղինակ՝ Ուլնիա կամ Զէյթուն՝ զրքին որ պատկուած է Սահակ-Մեսրոպեան մրցանակով: Ներկայ հատորը կը պարունակէ դաստիարակութեան հարցին, ազգային օրուան խնդիրներու, հին ու նոր եւ ապագայ կեանքի վրայ նորօրինակ-տեսութիւններ եւ առաջարկներ: Հեղինակն իր արգահատելի վիճակով արժանի է քաջալերութեան: Հասցէ՝ Մեծ Շուկայ, Թէր-զիպաշի փողոց, թիւ 20: Գին 10 զրշ:

ԿԵԱՆՔԻ ԾՐԱԳԻՐՆԵՐ. — Կազմեց Սերովքե Վրդ. Սամուէլեան. — Իր մէջ կ'ամփոփէ Յրանքլինի, Ռոչիլտի, Կարֆիլտի եւ այլ նշանաւոր տնտեսագիտութեանց կեանքի ծրագիրները, եւ ուրիշ կարեւոր նիւթեր: Հայ պատանիներու, երիտասարդներու եւ ամէն կարգէ եւ հասակէ գործի տէր մարդոց համար անհրաժեշտ եւ պիտանի գարծ մըն է: Գին 2 զրշ: Կեդրոնատեղի Զարդարեան գրատուն:

ՀՄԱՅԵԱԿ ՔԶ. ԷՔՍԵՐՃԵԱՆ
ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՁՈՒԻ

Ա. Բ. Գ. ՀԱՅՈՐ

0/0 30 գեղշ

ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻ ՓԱՓԱԶԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Սիւմայիւլի Խան

